№ 234 Դեկտեմբերի 16 (28) 1881 Դեկտեմբերի 16 (28) № 234

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція ‹Мшакъ›

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹՒԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն ձևով և նոյն պրօգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄԱ․ I․ Տեղութեան կարգադրութիւններ, II․ Առաջնորդող յօդուածներ, III․ Ներքին տեսութիւն, IV․ Արտաքին տեսութիւն, V․ Խառն լուրեր, VI․ Հեռագիրներ, VII․ Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII․ Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 րուբլ է, կէս տարվան 6 ր․, իւրաքանչիւր ամսին 1 րուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція ‹Мшакъ›.

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Պատրիարքի հրաժարականը։ Անաջողութիւններ Պրուսիայի և Իռլանդիայի մէջ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 11 դեկտեմբերի

Ձեր լրագրի միջոցաւ արդէն յայտնի է նրա ընթերցողներին, որ ներկայ թուականի յուլիսի 6-ին քաղաքումս հաստատվեցաւ «Հայոց բարեգործական ընկերութիւնը»։ Այդ ընկերութիւնը հիմնելու առաջին իսկ օրից մինչև օրս «Մշակը» միշտ հիւրընկալել է իր էջերում նրան վերաբերեալ բոլոր ծանուցմունքը, որի համար ընկերութեան նորընտիր խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Խորհուրդը քաջայոյս է, որ այսուհետև ևս «Մշակ» նոյն ընդունելութեամբ կը հիւրընկալէ ընկերութեան վերաբերեալ ամեն ծանուցմունք․ որով նպաստած կը լինի գործի յառաջադիմութեանը։

Նախագահ՝ Աղէքսանդր Անանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ուրբաթ, դեկտեմբերի 18-ին հայոց կլուբի դահլիճում կոնցերտ կը լինի յօգուտ Բէժական ուսումնարանի չքաւոր աշակերտների։ Կոնցերտին կը մասնակցեն Կորգանով, Ալիխանով, Պալմ, Ադամեան, Գարագաշեան, Խվանովա և ուրիշները։ Յոյս ունենք, որ հասարակութիւնը ներկայ կը լինի կոնցերտին, որով նպաստած կը լինի Բէժական ուսումնարանի չքաւոր աշակերտների դրութեան թեթևացնելուն։

—

Ցարիցինի հայերը, որոնք մեծ մասամբ Բագուի հայ գաղթականներ են, ուղարկել են մեր խմբագրութեանը 120 րուբլ, «Մշակի» տասներկու օրինակի գինը, խնդրելով որ մենք ում կամենանք իրաւունք ունենք, մեր կամքին համեմատ, անվարձ ուղարկել մեր լրագիրը։ Դա առաջին օրինակ է հայերի մէջ, և դարձեալ Բագուի հայերն են այդ օրինակը ցոյց տալիս։ Մենք կը նշանակենք այդ տասներկու օրինակները այլ և այլ դպրոցների աշակերտների կամ ուսանողների համար և կը յայտնենք այնուհետև մեր լրագրում թէ ում ենք նշանակել։

—

Երկուշաբթի օր, դեկտեմբերի 14-ին, առաջին անգամ տրվեցաւ պ․ Ա․ Քիշմիշեանի նոր պիէսան «Օրիորդ Բէրօյեանց»։ Պիէսան թէև ունի մի քանի պակասութիւններ, բայց առհասարակ հետաքրքիր և կենդանի պիէսա է։ Այդ պիէսայի մասին կը խօսենք մի այլ անգամ մանրամասնաբար։ Եթէ Աղէքսանդր Քիշմիշեան իր առաջին պիէսայով արդէն մի ամբողջ գրուածք է ներկայացրել, որով միանգամից դասաւորել է իրան մեր սակաւաթիւ ինքնուրոյն գրողների շարքը, յոյս կայ որ նրա հետևեալ պիէսաները աւելի էլ ազատ կը լինեն այդ առաջին գրուածքի թերութիւններից։ Վերջապէս թոյնի, որի և մահի տեղ, այսպէս թէ այնպէս եղաւ մի փորձ մեր կեանքի հոգեբանական քննութեան։

—

Հայոց «Բարեգործական ընկերութեան» խորհուրդը յայտնում է ի գիտութիւն հասարակաց որ ընկերութեան երկրորդ ընդհանուր ժողովը տեղի կունենայ ամսոյս 20-ին, կիրակի, 11 ժամին, Արծրունու թատրոնում։ Ժողովի պարապմունքը պէտք է լինի՝ ա) խորհրդի հինգ փոխ-անդամի ընտրութիւնը, բ) Տեղական վարչութիւնների և մասնաժողովների համար կազմած հրահանգի քննութիւնը և հաստատութիւնը․ գ) Վեհափառ Կաթողիկոսին և Ներսէս Պատրիարքին ընկերութեան պատուաւոր անդամութեան կոչումն յանձնելը և դ) 1882 թուականի նախահաշվի հարցը։ Ընկերութեան անդամները կը բարեհաճեն ժողով մտնելիս ցոյց տալ իրանց անդորրագրերը։ Անդամակցութեան ստորագրութիւնն ընդունվում է և նոյն օրը ժողովի նախասենեակում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

—

Երէկի Թղթաբերով եկած դեկտ․ 1 թիւ Թայմզի մէջ հետևեալ հեռագիրը կը տեսնենք, իւր Կ․ Պօլսի թղթակցէն քաշուած.

„Հայոց Պատրիարքը դարձեալ հրաժարելու դիտաւորութիւն յայտնած է, և այս անգամ աւելի լուրջ կը թուի քան թէ նախկին պարագայից մէջ զի իւր հրաժարականը ներկայացուցած է այժմ Բ․ Դրան և ոչ պարզապէս Հայոց Ազգային ժողովին, որպէս երբեմն։ Ներսէս Սրբազան, վերջին Ռուսական պատերազմին աւարտէն ի վեր, Թուրք կառավարութեան վրայ արտաքին դիւանագիտական ճնշում բանեցունելով իւր հայրենակցաց համար զիջումներ ստանալու քաղաքականութիւնը ներկայացուցած է, և այս ուղղութեամբ իւր ի գործ դրած ջանքերն

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Հայր սուրբը շուռ եկաւ, տեսաւ իր առջև Սառային։ Ուրախութիւնը և զարմացումը փոփոխակի կերպով տիրեցին նրա սրտին։

—Դու ո՞ր տեղից եկար, բակի դուռը փակ էր։

Երևում էր, Սառան շատ վազվզել էր, նրա ձայնը սաստիկ շնչառութիւնից կտրատվում էր։

—Մեր կտուրի վրայով եկայ, ասաց նա.—այնտեղից ճանապարհ կայ։ Առաջ մտայ մեր հարևանի տունը, երեխաս տեսնելու․ նրանց մօտ պահ էի տուած։ Խեղճ տղայ, ինչպէս հանգիստ քնած էր։ Նա չը գիտէ, թէ քանի րոպէից յետոյ ինչեր կը պատահեն.... Ուզեցի զարթեցնել, թողեցի այնպէս քնած։ Յետոյ շտապեցի այստեղ, գիտէի, որ դու ինձ սպասելիս կը լինես։

Արագ շարժումը մի կողմից, ուրախութիւնը միւս կողմից, տուել էին տիկնոջ դէմքին խիստ զուարթ պայծառութիւն։ Նա մի առանձին քնքշութեամբ բալանիները մեկնեց դէպի հայր սուրբը, ասելով.

—Ա՛ռ, ինչ որ ցանկանում էիր...

Հայր սուրբը ընդունեց բալանիները, հարցնելով.

—Ինչով կարող եմ վարձատրել քեզ։

—Նրանով, որ դու թոյլ տաս ինձ ասել՝ գրկիր ինձ։—Այդ ասելու իրաւունքը ինձ համար մեծ վարձատրութիւն է։ Մեր հին, դժբախտ անցքերից յետոյ ես կորցրել էի այդ իրաւունքը, իսկ այժմ, կրկին արժանացրու քո սէրին։

Վերջին խօսքերը արտասանելու միջոցին գեղեցիկ կնոջ աչքերում երևացին արտասուքի կաթիլներ։ Այդ սրտաշարժ խոստովանութիւնը արեգային մոռանալ տուեց բոլոր անցեալը.... Նա գրկեց նրան, սկսեց ջերմ կերպով համբուրել։

—Ես մոռանում եմ, Սառա, մոռանում եմ բոլորը, թէ որքան ցաւ, որքան դառնութիւն պատճառեցիր ինձ քո անհաւատարիմ վարմունքով։ Ոչինչ ապաշխարութիւն չէր կարող քաւել այդ յանցանքը․ ոչինչ սպեղանի չէր կարող բժշկել իմ սրտի վէրքը, իսկ այս գիշեր բոլորը անցաւ։ Դու ապացուցիր, որ արժանի ես սիրվելու և ես իմ հոգու բոլոր զօրութեամբ կը սիրեմ քեզ։

Տիկինը ոչինչ չը պատասխանեց։ Սաստիկ ուրախութիւնը և սաստիկ երկիւղը միօրինակ կապում են մարդու լեզուն։ Նա բաւական էր, որ կրկին գտնվում է իր մի ժամանակ սիրած տղամարդի գրկում. դրանով բախտաւոր էր, դրանով երջանիկ էր համարում իրան։

—Հիմայ դառնանք դէպի գործը, ասաց երիտասարդը․—դրանք ո՞ր դռների բալանիներն են։

—Այդ մէկը դրսի դռան բալանին է, որ տանում է դէպի մի փոքրիկ քառակուսի բակ, որի իւրաքանչիւր անկիւնում գտնվում են մի-մի ահագին չինարիներ և հովանաւորում են ամբողջ բակը։ Այդ բակի միջից մի նեղ դուռ տանում է դէպի զէնքերի պահեստի ամբարանոցը, իսկ մի մեծ դուռ տանում է դէպի խանի դիւանատան ընդարձակ բակը։

—Ինչ ես կարծում, ես չէ՞ի մոլորվի այդ լաբիրինթոսի մէջ։

—Ես քեզ հետ կը լինեմ, ինձ բոլոր ծակուծուկերը յայտնի են, ես քեզ միայնակ չեմ թողնի։

Փոխանակ պատասխանի, երիտասարդը միւս անգամ գրկեց իր հերոսուհուն և սեղմեց իր կուրծքի վրա։

—Դու երբէք ինձ այդքան քաղցր չես եղել, որպէս այս գիշեր, նազելիս, ասաց նա խորին հոգեզմայլութեան մէջ։—Հիմայ պատրաստվենք գնալու։

—Ես շատ չեմ ուշացնի քեզ, պատասխանեց տիկինը, նրա գրկից դուրս պոծնելով․—ինձ հարկաւոր է միայն փոխել հագուստս։

Նա վազեց իր սենեակը և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ տղամարդի հագուստով։

—Պէտք է մարդու հագուստը սազ գայ իր գործին, այդպէս չէ՞, սիրելիս, ասաց նա ծիծաղելով։

—Հիմայ գնանք։

—Սպասիր, ասաց արեգան նրան կանգնեցնելով․—ես մոռացայ քեզ հարցնել, թէ ինչպէս յաջողվեցաւ քեզ ձեռք բերել այդ բալանիները։

—Դա մի ամբողջ պատմութիւն է, լաւ է, որ չը հարցնէք, պատասխանեց Սառան հրաժարվելով։

—Ինչու։

—Կարելի է փարիչանը բարկանայ, եթէ քեզ պատմելու լինեմ։

—Երևի, մի գաղտնիք կայ․ բայց դու գիտես, որ մենք հոգևորականներս իրաւունք ունենք ամեն մարդու գաղտնիքները գիտենալու, ասաց երիտասարդը ծիծաղելով։—փարիչանը չի բարկանայ, պատմիր, սիրելիս։

—Փարիչանը գողացել է այդ բալանիները ամրոցի «դափուչի-բաշիից» (դռնապանների գլխաւորից) ասաց Սառան, երկար մտածելուց յետոյ։

—Ինչպէս։

—Հէնց այդ ինչպէսի մէջն է բոլոր գաղտնիքը, լսիր․—Դռնապանների գլխաւորը մի ծերունի է, այն ծերունիներից մէկը, որ մազերը սպիտակելուց և ատամները թափվելուց յետոյ նորից սկսում է սիրել։ Նա մի առանձին ախտ ունի սիրահարվել միայն կանանոցի աղախինների վրա, որոնք անդադար նրա աչքերի առջևից անցուդարձ են անում, երբ նա ամեն առաւօտ դռները բաց անելով, փառաւորապէս նստում է ամրոցի մեծ դռան մօտ։ Դա իր մտքում սիրում էր փարիչանին, որը, կարելի է ասել, աղախինների մէջ ամենագեղեցիկն է։ Շատ անգամ գնում էր իր երևակայական սիրուհու համար թանգագին ընծաներ, քաղցրաւենիք և ուրիշ այդպիսի բաներ։ Փարիչանը ուրախութեամբ ընդունում էր ընծաները, վայելում էր և քթի տակից ծիծաղում էր ծերունու յիմարութիւնների վրա։

Երբ ես փարիչանին առաջարկեցի, թէ պէտք է ձեռք բերել զէնքերի պահեստի բալանիները, նա մի րոպէ մտածեց ու ինձ ասաց․ «Այդ հեշտ է․ ես հէնց այս գիշեր ձեռք կը բերեմ բալանիները»...

Փարիչանը, որ միշտ աշխատում էր խոյս տալ իր անտանելի սիրողից, այս գիշեր, ընդհակառակն, միջոց է որոնում հանդիպել նրան։—«Այդ ինչ է պատահել քեզ հետ, Ասկար «ամի» (կանանոցի բոլոր աղախինները նրան «ամի» *) են կոչում) ասում է նրան։—Վաղուց է ինձ համար ոչինչ չես գնել»։

Այդ խօսքերը գժուացնում են «ամիին»․ առաջին անգամ նա փարիչանի կողմից գտնում է մի այդպիսի մտերմութիւն։

—«Ասկար ամիի հոգին քեզ մատաղ լինի, պատասխանում է ծերունին,—«դու միայն Ասկար ամիի հետ այդպէս քաղցր խօսիր, նա իր բոլոր ունեցածն ու չունեցածը քեզ կընծայէ։

—«Ես քեզ հետ քաղցր կը խօսեմ, Ասկար ամի, էլ քեզ ուշունցներ չեմ տայ, ասում է փարիչանը աւելի հրապուրիչ կերպով ու մօտենում է, ձեռքը քսում է նրա ուսին։

Փարիչանը սովորութիւն ունէր Ասկար ամիի

---

*) Ամի նշ․ հօրեղբայր։